ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-22/47 ծածկագրով էլեկտրոնային աճուրդով էլեկտրական երկարացման լարերի գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի նիստի
Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 13.04.2022թ. ժամը 12:00-ին էլեկտրոնային գնումների e-auctions համակարգի միջոցով:

ք. Երևան 13.04.2022թ ժ.12:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Արա Խաչատրյան

Հանձնաժողովի անդամ՝ Հարություն Մարտիրոսյան

Անուշ Գևորգյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Աննա Սիմոնյան

1. Տեղեկատվություն օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի հիմնավորումների մասին.

1.1 Ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հիմնավորումներ չեն ներկայացվել:

2. Տեղեկատվություն հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.

2.1 Ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

Հ/Հ	Մասնակիցների անվանումները
1	«Ջուզեպպե» ՍՊԸ
2	«Դավիթ և Միքայել» ՍՊԸ
3	«ՎԻՆՆԵՐ ԳՐՈՒՊ» ՍՊԸ
4	Ռեալ Բուսինեսս ՍՊԸ
5	Էմ-Էտ Գրուպ ՍՊԸ

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.

3.1 Ընթացակարգով կայացած հակադարձ աճուրդի արդյունքում մասնակիցները ներկայացրել են հետևյալ գնային առաջարկները.

Հ/Հ	Նախահաշվային գինը, ՀՀ դրամ	Մասնակիցների անվանումները									
		«Ջուզեպպե» ՍՊԸ		«Դավիթ և Միքայել» ՍՊԸ		«ՎԻՆՆԵՐ ԳՐՈՒՊ» ՍՊԸ		«Ռեալ Բուսինեսս» ՍՊԸ		«Էմ-Էտ Գրուպ» ՍՊԸ	
		Վերջնական առաջարկված գինը, ՀՀ դրամ									
		Առանց ԱԱՀ	Առանց ԱԱՀ	Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ-ն	Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ-ն	Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ-ն	Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ-ն
1	1000000	450000	540000	611660	733992	798600	958320	815667	978800.40	1000000	1200000

4. Հակադարձ աճուրդի արդյունքում, յուրաքանչյուր չափաբաժնի մասով, համակարգի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի հայտի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության, հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

4.1 «Ջուզեպպե» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը կազմվել է հրավերի պահանջներին համապատասխան,

4.2 «Ջուզեպպե» ՍՊԸ-ի կողմից հայտում առկա չեն հրավերով պահանջվող փաստաթղթերը, մասնավորապես՝ բացակայում է ապրանքի ամբողջական նկարագիրը,

4.3 «Ջուզեպպե» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝ Հավելված 1-ը չի համապատասխանում հրավերով սահմանված ձևաչափին /սխալ է մասնակցի ռուսերեն լեզվով անվանումը, ընթացակարգի ծածկագիրը, պատվիրատուի անվանումը/, բացակայում է իրական շահառուների վերաբերյալ տեղեկատվությունը և ապրանքի ամբողջական նկարագիրը, իսկ ներկայացված փաստաթուղթը հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ տնօրենի կամ վերջինիս կողմից լիազորված անձի կողմից:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

5. Գնահատման գործընթացի կասեցման մասին

5.1 Հաշվի առնելով, որ հակադարձ աճուրդի արդյունքում համակարգի կողմից 1-ին տեղ զբաղեցրած «Ջուզեպպե» ՍՊԸ-ն 06.04.2022թ ներառվել է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցանկում և այն, որ հանձնաժողովի անդամներին տեսանելի չեն մասնակիցների կողմից հայտեր ներկայացնելու ամսաթվերը, կասեցնել գնման գործընթացը և ՀՀ ֆինանսների նախարարությունից ստանալ տեղեկատվություն հայտ ներկայացնելու ամսաթվի վերաբերյալ,

5.2 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ՀՀ ֆինանսների նախարարությունից համապատասխան տեղեկատվությունը ստանալուց հետո, ժամը 11:00-ին, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2, 6-րդ հարկ, 611 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 19.04.2022թ. ժամը 11:00-ին

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Արա Խաչատրյան

Հանձնաժողովի անդամ՝ Հարություն Մարտիրոսյան

Անուշ Գևորգյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Աննա Սիմոնյան

6. Հայտ ներկայացնելու ամսաթվի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու մասին

6.1 ՀՀ ֆինանսների նախարարությունից 19.04.2022թ ստացվել է տեղեկատվություն /կցվում է/, համաձայն որի «Ջուզեպպե» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված չէ գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցանկում:

7. Գնահատման գործընթացի կասեցման մասին

7.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ կասեցնել գնահատման գործընթացը և առաջարկել «Ջուզեպպե» ՍՊԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել 4.2 և 4.3 կետում արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 21.04.2022թ. ժամը 15:00-ին

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Արա Խաչատրյան

Հանձնաժողովի անդամ՝ Հարություն Մարտիրոսյան

Անուշ Գևորգյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Աննա Սիմոնյան

8. Գնման գործընթացի գնահատման ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների շտկման մասին.

8.1 «Ջուզեպպե» ՍՊԸ-ի կողմից չեն շտկվել 4.3 կետում արձանագրված անհամապատասխանությունները, մասնավորապես՝ ներկայացված փաստաթղթերը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ տնօրենի կամ վերջինիս կողմից լիազորված անձի կողմից, քանի որ ներկայացված լիազորագիրը տրված է այլ գնման ընթացակարգի փաստաթղթեր ստորագրելու համար:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0

9. Տվյալներ մերժված մասնակիցների վերաբերյալ.

9.1 Հիմք ընդունելով 8.1 ենթակետը՝ մերժել «Ջուզեպպե» ՍՊԸ-ի հայտը՝ հրավերով սահմանված պահանջներին չհամապատասխանելու հիմքով,

9.2 «Դավիթ և Միքայել» ՍՊԸ-ի, «ՎԻՆՆԵՐ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի, Ռեալ Բուսինեսս ՍՊԸ-ի հայտերը մերժել՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 18.05.2017թ թիվ 534-Ն որոշմամբ հաստատված կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետը,

9.3 «Էմ-Էտ Գրուպ» ՍՊԸ-ի հայտը համակարգի կողմից մերժվել է նախահաշվային գինը գերազանցելու հիմքով:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0

10. Գնահատման արդյունքների մասին

10.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 18.05.2017թ թիվ 534-Ն որոշմամբ հաստատված կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետը՝ գնման գործընթացը հայտարարել չկայացած համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի՝ պայմանագիր չկնքվելու հիմնավորմամբ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0

10.2 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.5017թ. Թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետը՝ «Ջուզեպպե» ՍՊԸ-ի տվյալները՝ ներառյալ համապատասխան հիմքերը, ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարություն՝ վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցանկում ներառելու նպատակով:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողով՝

---------- Արա Խաչատրյան /նախագահ/

---------- Հարություն Մարտիրոսյան

---------- Անուշ Գևորգյան

---------- Աննա Սիմոնյան /քարտուղար/